# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,

№ 17/1866-24 « » 202 թ.

«EcoNews.am» ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԿԱՅՔԻ ԽՄԲԱԳԻՐ ՄԱՐԻԱՄ ՏԱՇՉՅԱՆԻՆ
(էլ.փոստ՝ mariam199107@gmail.com)

**Հարգելի՛ տիկին Տաշչյան,**

Ի պատասխան Ձեր՝ 03.01.2024թ. Երևանի քաղաքապետարան առցանց ուղղած հ. Դ-45-24 հարցմանը, տեղեկացնում եմ, որ համաձայն 05.01.2024թ. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի հ. Եկ-002-2024 գրության՝ 2023թ. կենդանիների էֆթանազիա չի կատարվել, անկումների պատճառները հստակ պարզաբանված են, անկած կենդանիների հերձումներն իրականցվել են անկախ փորձագետ-անատոմի կողմից, լաբորատոր հետազոտություններն իրականացվել են ՍԱՏՄ լաբորատորիայում: Անկման յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ կազմված է համապատասխան ակտ: Երևանի կենդանաբանական այգու տարածքում անկած Պրժևալսկու ձիերը և թուրքմենական կուլանները, համաձայն 15.03.2023թ. նվիրատվության պայմանագրի, հանդիսանում էին «Greens Zoological, Rescue & Rehabilitation Center»-ին հանձնված կենդանիներ, որոնք տեղափոխման պահին արդեն իսկ չէին հանդիսանում Երևանի կենդանաբանական այգու կենդանիների հավաքածուի մաս: Համաձայն պայմանագրի՝ տեղափոխման ողջ գործընթացն իրականացրել են «Greens Zoological, Rescue & Rehabilitation Center» կենտրոնի կենդանաբույժները:

Անկած կենդանիների տեսակային կազմի և ժամանակահատվածի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է առ կից:

Առդիր՝ 1 նիշք:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**
**ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**
**ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝** **ԳՈՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Կատարող՝ Է. Արամյան
Բնապահպանության վարչություն
Հեռ.՝ (011)514-263